Ինչպէս որ 1905 թ. հայ-թաթարական կռիւների ժամանակ, հայերը Բագուում թաթարների հետ խօսելիս ասում էին՝ «Ղօշի սեան դէթ Ակեարանա». վերջերում էլ Ադրբէյջանի անյաջողութիւններից յետոյ, Ղարաբաղի հայերը թաթարներին ասում էին՝ «Ղօշի սեան դէթ Զարուղա»:

Հայկական Խորհրդի բողոքները միշտ էլ անհետեւանք էին մնում:

Կ. Կոմիտէն եւ Ինքն. Մարմինը տեսնելով, որ դրութիւնը օր-օրի վրայ ծանրանում է, որ երկու մարմինները կարուած են դրսի աշխարհից եւ չգիտեն ինչ է կատարւում Հայաստանում, որ Ադրբէյջանի կառավարութիւնը խախտել է 7-րդ համագումարի համաձայնագիրը եւ զօրքեր է շարժել Ղարաբաղի վրայով ու կռիւ է յայտարարել Զանգեզուրին, որ կոտորածներ է առաջ բերում քաղաքում եւ շրջաններում, որ օրը ցերեկով կազմակերպուած աւազակային խմբերը յարձակւում են հայկական գիւղերի վրայ եւ թալանում նրանց ունեցած, որ Ադրբէյջանի կառավարութիւնը նպատակ ունի վերոյիշեալ միջոցներով քայքայել եւ զինաթափ անել հայկական շրջանները, որ բացարձակապէս երկու մարմինները զուրկ են նիւթական միջոցներից,— որոշում են, ինչ գնով էլ լինի, մի մարդ ուղարկել Երեւան, նախ՝ ճանապարհին տեղեկութիւններ հաւաքելու եւ Երեւանի վրայով Զանգեզուր յայտնելու, երկրորդ՝ զեկուցանելու Հ. Յ. Դ. Բիւրոյին, Ղարաբաղում ստեղծուած ծանր կացութեան մասին, երրորդ՝ Հայաստանի կառավարութեան միջոցով, Ղարաբաղի հայութեան բողոքը լսելի դարձնելու դրսի աշխարհին:

Երկու մարմինները միաժամանակ մի բիւրջէ են ներկայացնում Բիւրոյին եւ միանըւազ մի գումար են խնդրում, միմիայն ռազմամթերքի համար գործադրելու առաջադրութեամբ:

Կ. Կոմիտէն ու Ինքն. Մարմինը իրենց պաշտօնական գրութիւններով Ն. Ն-ին ուղարկում են Երեւան:

Ինքնապաշտպանական Մարմինը շարունակում է իր աշխատանքները գաւառում եւ կանոնաւոր կապ է ստեղծում Զանգեզուրի Ա. Շ-ի հետ: